ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«13» հոկտեմբեր 2023թ. № 20-Լ

ՀՐԱՄԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2111-Ն որոշման 17-րդ կետը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի.

2) որ փորձաքննությունների կատարման ծառայություններ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 1023 «Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագրի 11005 «Փորձաքննությունների ծառայություններ» միջոցառմամբ հատկացված միջոցների հաշվին փորձաքննությունների

ծառայությունները ձեռք են բերվում «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո»» և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ»» պետական ոչ առևտրային կազմակերպություններում ստացված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ստորաբաժանումների՝ համապատասխան փորձաքննությունը նշանակելու մասին որոշումների հիման վրա.

3) փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ 2023 թվականի համար՝ 4500 դրամ.

4) որ 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն տվյալ միջոցառման հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում իրավասու է փոփոխելու սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակը՝ ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը կամ տեսակը չի համապատասխանի հավելվածում նախատեսվածին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

1/13/2023

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731 ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
<<13>> հունվարի 2023թ.
N 20-Լ հրամանի

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

N	Փորձաքննության տեսակը	Քանակը (հատ)
1	Ձեռագրաբանական	-
2	Հեղինակային	-
3	Փաստաթղթաբանական	8
4	Տեսաձայնագրային	-
5	Ֆոտոտեխնիկական և դիմանկարային	-
6	Հետքաբանական	8
7	Ձգաբանական	-
8	Պայթունատեխնիկական	-
9	Նյութագիտական	619
10	Սննդամթերքի և խմիչքների	26
11	Հողագիտական և կենսաբանական	12
12	Հրդեհատեխնիկական	-
13	Շինարարատեխնիկական	-
14	Ավտոտեխնիկական	-
15	Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական	-
16	Ապրանքագիտական	647
17	Էլեկտրատեխնիկական	-
18	Դատահոգեբուժական	-
19	Դատագենետիկական	-
20	Համակարգչատեխնիկական	-
21	Դատաբժշկական	-
22	Մշակութային արժեքների	-
23	Հոգեբանական	-
24	Ճարտարագիտատեխնիկական	-
25	Օդորոլոգիական	-
26	Լինգվիստիկական	-
27	Էկոլոգիական	-
28	Պայթյունատեխնոլոգիական	-
29	Մտավոր սեփականության օբյեկտների	2
30	Միջուկային քրեագիտական	-
	Ընդամենը	1,322